



**FINCA®**

Հաստատված է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության  
28.03.2019թ. թիվ 22/2019 որոշմամբ

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**«Գյուղ Պարզ» վարկերի տրամադրման պայմաններ**

<b>Ակսած 2019թ.-ի ապրիլի 17-ից վարկը տրամադրվում է ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներքոնշյալ պայմաններով</b>		
<b>ՀԱՃԱՆՏՈՐԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>		
Վարկառուի նկարագիր	ՀՀ-ում գրանցված Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր և մասնավոր տնտեսավարողներ, ովքեր զբաղվում են գյուղատնտեսությամբ:	
Վարկառուի տարիք	21 տարին լրացած անձինք, ընդ որում, դիմելու պահին հաճախորդի տարիքը, գումարած ակնկալվող վարկի ժամկետը չի կարող գերազանցել 70 տարեկանը:	
Նախնական պահանջներ հավանական վարկառուի նկատմամբ	<ul style="list-style-type: none"> <li>✓ Հավանական հաճախորդի բնակության և գյուղատնտեսության վարման վայրի առկայություն ՖԻՆՔԱ-ի մասնաճյուղերի ցանցի սպասարկման տարածքում,</li> <li>✓ Բավարարող վարկային պատմության առկայություն,</li> <li>✓ Նվազագույնը 3 ամսվա անդադար գյուղատնտեսական գործունեություն,</li> <li>✓ Համապատասխանություն ՖԻՆՔԱ-ի սոցիալական և բնապահպանական ստանդարտներին:</li> </ul>	
<b>ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀՀ ԴՐԱՄՈՎ</b>		
Վարկի գումար	<b>500 001 – 1 500 000</b>	<b>1 500 001 – 2 500 000</b>
Անվանական տարեկան տոկոսադրույք: Հաշվարկվում է վարկի մնացորդից:	<b>14.9%</b>	
Վարկի տրամադրման վճար վարկը բանկերի միջոցով ստանալու դեպքում կամ կանխիկ տրամադրման վճար վարկը վարկատուի դրամարկղից կանխիկ ստանալու դեպքում:	<b>3.5%</b>	

Հաշվարկվում է վարկի մայր գումարից:		
Վարկի սպասարկման ամենամսյա վճար (հաշվարկվում է վարկի մայր գումարից)	1%	0,5%

**ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԱՄՆ ԴՈՒՆՐՈՎ**

Վարկի գումար	300 – 5 000
Անվանական տարեկան տոկոսադրույք: Հաշվարկվում է վարկի մնացորդից:	18%
Վարկի տրամադրման վճար վարկը բանկերի միջոցով ստանալու դեպքում կամ կանխիկ տրամադրման վճար վարկը Վարկատուի դրամարկղից կանխիկ ստանալու դեպքում: Հաշվարկվում է վարկի մայր գումարից:	4.5%՝ նվազագույնը 12 000 ՀՀ դրամ
Սպասարկման ամենամսյա վճար: Հաշվարկվում է վարկի մայր գումարից	0.25%

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Վարկի տրամադրման ժամկետ (նվազագույն և առավելագույն)	6 – 48* ամիս
Վարկի նպատակ	Վարկը տրամադրվում է շրջանառու և հիմնական միջոցների համալրման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ կարիքների համար: Վարկառուն վարկային միջոցները ստանալիս պետք է գործի իր անունից և իր օգտին: Արգելվում է վարկ վերցնել ի օգուտ երրորդ անձի:

Վարկի տրամադրման եղանակ	Կանխիկ, անկանխիկ
Վարկի մարման եղանակ	<p>✓ Անուիտետային ամենամսյա մարումներ (վարկը վճարվում է վարկի գումարի, տոկոսագումարի և սպասարկման գումարի (առկայության դեպքում) հանրագումարից կազմված հավասարաչափ մասերով),</p>
	<p>✓ Յուրաքանչյուր 12 ամսում (վարկային տարի) թույլատրվում է առավելագույնը 9 արտոնյալ մարումներ (ամիսներ), ընդ որում, իրար հաջորդող արտոնյալ մարումների քանակը չպետք է գերազանցի 9-ը վարկի ժամկետի ողջ ընթացքում,</p>
	<p>✓ 1 500 001 – 2 500 000 ՀՀ դրամին (3 001 – 5 000 ԱՄՆ դոլար) համարժեք վարկերի համար</p> <ul style="list-style-type: none"> <li>Վարկի մայր գումարի և/կամ տոկոսագումարների, սպասարկման վճարների մարումների պարբերականությունը. <ul style="list-style-type: none"> <li>ա) 6 ամիսը մեկ անգամ,</li> <li>բ) 4 ամիսը մեկ անգամ:</li> </ul> </li> </ul> <p>Մնացած բոլոր ամիսներին տրամադրվում է արտոնյալ մարումների հնարավորություն՝ զրոյական վճարումներով: Ընդ որում՝ վարկը ստանալուց հետո 12 ամիսների ընթացքում անհրաժեշտ է կատարել մայր գումարի առնվազն մեկ վճարում:</p> <ul style="list-style-type: none"> <li>Թույլատրելի է ձկուն մարման գրաֆիկ</li> </ul>
Տրանշեր	Մեկ «Գյուլ Պարզ» վարկի տրանշերի առավելագույն քանակը՝ 2:
Նշումներ	* Վարկը կարող է տրամադրվել մինչև 48 ամիս ժամկետով վարկի օգտագործման հետևյալ նպատակների դեպքում՝ հիմնական միջոցների ձեռքբերում և/կամ կապիտալ վերանորոգում և/կամ այլ նպատակներ՝ վարկային կոմիտեի որոշմամբ:

**ԱՊԱՀՐՎՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Վարկի ապահովման ձևերը (նվազագույն պահանջները) <sup>1</sup>	<p><b>300 – 1 000 ԱՄՆ դոլարի</b> չափով վարկերի դեպքում</p> <p>✓ երաշխավոր չի պահանջվում, եթե վարկային կոմիտեն չի ներկայացրել այլ պահանջ</p> <p>✓ գրավ չի նախատեսվում</p>	<p><b>500 001 – 1 500 000 ՀՀ դրամի և 1 001 – 3 000 ԱՄՆ դոլարի</b> չափով վարկերի դեպքում</p> <p>✓ առնվազն մեկ երաշխավոր<sup>2</sup></p>	<p><b>1 500 001 – 2 500 000 ՀՀ դրամի և 3 001 – 5 000 ԱՄՆ դոլարի</b> չափով վարկերի դեպքում</p> <p>✓ նոր հաճախորդների դեպքում՝ մեկ ֆինանսական երաշխավոր<sup>3</sup></p> <p>✓ գործող<sup>4</sup> հաճախորդների</p>
--	--	--	--

		դեպքում մեկ երաշխավոր
	Նշումներ	
	1 Համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ գործող կարգերի, եթե հաճախորդի բիզնես-գործունեությունում առկա է այլ անձի(երի) մասնակցություն (փայտատիրություն), ապա՝ անկախ վարկի տեսակից և գումարի չափից, տվյալ մասնակցի(ների) երաշխավորությունը հանդիսանում է վարկի ապահովման պարտադիր պայման:	
	2 Բոլոր այն դեպքերում, երբ երաշխավորը չի հանդիսանում ներքին, ապա ընտանիքի անդամին պետք է կցել որպես փոխկապակցված անձ (ամուսնացած լինելու դեպքում որպես փոխկապակցված անձ դիտարկել կնոջը/ամուսնուն, բացառությամբ երկրից բացակայելու և այլ խոչընդոտող հանգամանքների պարագայում):	
	3 Ֆինանսական երաշխավորին ներկայացվող նվազագույն պահանջներն են՝ տրամադրվող վարկի գումարին համադրելի կայուն եկամտի (աշխատավարձ ձեռնարկատիրություն և այլն) և/կամ լիկվիդային սեփականության (փոխադրամիջոց, անշարժ գույք) առկայություն:	
	4 Գործող հաճախորդներ են համարվում նախկինում ՖԻՆՔԱ – ում վարկ ունեցած հաճախորդները, որոնք նոր վարկային դիմում են ներկայացնում, նախորդ վարկը մարելուց ոչ ուշ՝ քան երեք ամիս հետո:	
	– Գրավի ապահովագրության անհրաժեշտություն չկա	
	– Բոլոր այն դեպքերում, երբ երաշխավորը չի հանդիսանում ներքին, ապա ընտանիքի անդամին պետք է կցել որպես փոխկապակցված անձ (ամուսնացած լինելու դեպքում որպես փոխկապակցված անձ դիտարկել կնոջը/ամուսնուն, բացառությամբ երկրից բացակայելու և այլ խոչընդոտող հանգամանքների պարագայում):	
<b>ՀԱՎԵՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b>		
Զուգահեռ վարկեր	✓ Մեկ հաճախորդի զուգահեռ «Գյուղ Պարզ» վարկերի առավելագույն քանակը՝ 2,	
	✓ Մեկ հաճախորդի զուգահեռ «Գյուղ Պարզ» վարկերի առավելագույն գումարը՝ 2 500 000 ՀՀ դրամ կամ 5 000 ԱՄՆ դոլար:	
Վարկի վաղաժամկետ մարման պայմանները	Վարկառուն, առանց տուժանք վճարելու, իրավունք ունի վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի մարելու վարկը և կատարելու պայմանագրով նախատեսված պարտականությունները: Ընդ որում, վարկի վաղաժամկետ մասնակի մարման պարագայում համամասնորեն նվազում են վարկառուի կողմից ավել մարված վարկի գումարին համապատասխան վարկի հետագա ամսվա/ամիսների մարման ենթակա տոկոսագումարները և չեն նվազում վարկառուի կողմից հետագա ամսվա/ամիսների մարման ենթակա սպասարկման և այլ վճարները:	

	<p>✓ Վարկը վաղաժամկետ ամբողջական մարելու դեպքում վարկառուն վճարում է վճարման օրվա դրությամբ հաշվարկված վարկի սպասարկման և այլ վճարները, տոկոսները և վարկը:</p> <p>✓ Վաղաժամկետ մասնակի մարման պարագայում գանձվում է վարկառուի մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ենթակա ամբողջ գումարը, իսկ եթե կատարվող վճարումը գերազանցում է առաջիկա մարման ենթակա գումարի չափը, ապա այդ գերազանցող մասն ուղղվում է վարկի մարմանը (բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքի): Տվյալ դեպքում վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հետագա վճարման ենթակա տոկոսագումարները հաշվարկվում են վարկի մնացորդային գումարի հանդեպ և ավել մարված վարկի գումարին համապատասխան նվազում է վարկի հետագա ամսվա/ամիսների մարման ենթակա տոկոսագումարները: Իսկ այն դեպքում, երբ գումարը չի բավարարում մարել վարկառուի մարման ժամանակացույցով սահմանված առաջիկա մարման ամսաթվի ամբողջ գումարը, ապա մարումը կատարվում է հետևյալ հերթականությամբ՝ 1) սպասարկման և այլ վճարներ, 2) տոկոսներ, 3) վարկ:</p> <p>✓ Վարկառուն իր ցանկությամբ կարող է կատարել մարման ժամանակացույցով նախատեսված հետագա ամիսների վճարումները: Այդ դեպքում մարումները կկատարվեն հետևյալ հերթականությամբ. 1. հետագա ամիսների սպասարկման և այլ վճարներ, 2. վճարման օրվա դրությամբ հաշվարկված տոկոսներ, 3. վարկի մնացորդային գումարի հանդեպ հաշվարկվող հետագա ամիսների տոկոսներ, 4. հետագա ամիսների վարկի գումար: Վարկառուն հետագա ամիսների համար կատարված մարումների չափով ազատվում է վճարումներ կատարելուց մարման ժամանակացույցով նախատեսված օրերին:</p>
<p><b>ՏՈՒՎԱՆՔՆԵՐ</b></p>	<p>! Վարկառուի կողմից մարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում պարտավորությունները չկատարելու դեպքում վարկառուն պարտավորվում է վարկատուին վճարել տուժանք՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) վարկի գումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով, և</li> <li>• յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց (չվճարված) տոկոսագումարի նկատմամբ օրական 0.13%-ի չափով:</li> </ul>
<p>Վարկ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ վարչության որոշմամբ սահմանված հետևյալ փաստաթղթերը</p>	<p>Իրավաբանական անձ.</p> <p>✓ Պետական գրանցման վկայական, Տնօրենի ներդիր,  ✓ Տնօրենի, բաժնետերերի և երաշխավորի (առկայության դեպքում) անձնագրեր/ նույնականացման քարտեր,  ✓ Այլ փաստաթղթեր (Վարկային Կոմիտեի պահանջով):</p> <p>Անհատ ձեռնարկատեր և այլ մասնավոր տնտեսվարող</p>

	<ul style="list-style-type: none"> <li>✓ Պետական գրանցման վկայական,</li> <li>✓ Այլ փաստաթղթեր (Վարկային Կոմիտեի պահանջով):</li> </ul>
Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը	Վարկային հայտի վերաբերյալ կազմակերպությունը որոշում է կայացնում առավելագույնը 3 օրյա ժամկետում, տեղեկացնում է այդ մասին հայտ ներկայացնողին առավելագույնը 1 օրում, իսկ վարկը վարկառուին փաստացի տրամադրում է հայտը ներկայացնելու պահից առավելագույնը 9 օրում :
Վարկի տրամադրման դրական որոշման համար անհրաժեշտ գործոններ	<ul style="list-style-type: none"> <li>✓ Վարկունակության բավարար մակարդակ,</li> <li>✓ Որակյալ վարկային պատմություն,</li> <li>✓ Վարկի ապահովվածություն</li> </ul>
Վարկի մերժման գործոններն են	<ul style="list-style-type: none"> <li>✓ Վարկունակության անբավարար մակարդակ,</li> <li>✓ Վատ վարկային պատմություն</li> <li>✓ Վարկի ապահովվածության բացակայություն</li> </ul>
	✓ ՖԻՆՔԱ – ի նվազագույն պահանջներին անհամաձայատասխանություն
	✓ Այլ վարկային ռիսկեր
<b>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ</b>	<i>Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել ՖԻՆՔԱ – ի կողմից:</i>
	<b>!</b> <i>ՖԻՆՔԱ – ն իրավունք ունի վարկի տոկոսադրույքը միակողմանի կարգով փոփոխել՝ վարկառուի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում, պայմանագրով և պայմանագրի անբաժանելի մասը կազմող պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով,</i>
	<b>!</b> <i>Վարկի տոկոսադրույքի հաշվարկային դրույթը ենթակա է փոփոխման մինչև «+5» տոկոսային կետով, բայց ոչ ավել, քան ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթի կրկնապատիկը,</i>
	<b>!</b> <i>Փոփոխության վերաբերյալ վարկատուն ծանուցում է վարկառուին տվյալ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ</i>
	<b>!</b> <i>Ձեր գույքը (տուն, մեքենան և այլն) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե Դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկի տոկոսագումարների և վարկի գումարի մարումները,</i>
	<b>!</b> <i>Ձեր կողմից տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամկետին չվճարելու դեպքում Ձեր մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում,</i>

Վարկի տրամադրման վայր	Վարկը կարող է ձևակերպվել ՖԻՆՔԱ – ի ցանկացած մասնաճյուղում: Ընկերությունը նախքան վարկային պայմանագրի կնքումը վարկառուին տրամադրում է Անհատական թերթիկ
-----------------------	---

## ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱՊՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար՝ տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ)

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

A վարկի գումարը (վարկատուի կողմից վարկառուին տրամադրված վարկի սկզբնական գումարը)

n վարկի մարմանն ուղղված վճարի թիվը

N վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

Kn վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

Dn վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

### Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Վարկի գումար	1 000 000 ՀՀ դրամ
Անվանական տարեկան տոկոսադրույք	14.9%
Վարկի ժամկետ	12 ամիս
Վարկի տրամադրման միանվագ վճար	վարկի գումարի 3.5%
Սպասարկման ամենամսյա վճար	վարկի գումարի 1%
Մարումներ	ամենամսյա հավասարաչափ մարումներ (մայր գումարը և տոկոսները միասին)
Արտոնյալ ժամանակաշրջան (երբ վարկի մայր գումարից մարումներ չեն կատարվում)	9 ամիս
Վարկի տրամադրման օր	01 հոկտեմբեր 2018 թ.
Առաջին մարման օր	01 նոյեմբեր 2018 թ
<b>Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 37.79 %</b>	